ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՎԿ ԾՐԱԳԻՐ

1. Երեւանը դառնալու է Եվրոպական քաղաքակիրթ չափանիշներին համապատասխանող կատարյալ մայրաքաղաք՝ մարդակենտրոն, հարմարավետ, կանաչ, մաքուր և անվտանգ:

2. Երեւանի զարգացումը ենթարկվում է Գլխավոր հատակագծին՝ քաղաքական և քաղաքաշինական հստակ ծրագրին, որը պետք է լինի բաց ու հասանելի հասարակության համար, որի մեջ որեւէ փոփոխությունը հնարավոր է միայն բարձրակարգ մասնագիտական հիմնավորման արդյունքում, որն էլ իր հերթին պետք է արժանանա քաղաքացիների հավանությանը:

3. Բոլոր կարևոր որոշումները Երեւանի վերաբերյալ պետք է դրվեն քաղաքային հանրաքվեի: Քաղաքացին է դառնալու քաղաքի տերն ու պատասխանատուն:

4. Վերականգնվելու է Երեւանի գլխավոր ճարտարապետի պաշտոնը, որին կից ստեղծվելու է հատուկ լիազորություններով օժտված գեղագիտական խորհուրդ՝ նախագծերի, շինարարության, կանաչապատման, գովազդների, վերանորոգումների, շենքերի արտաքին տեսքի, անվանումների և այլ փոփոխությունների վերահսկման նպատակով՝ համաձայն ՀՀ Սահմանադրությանը, Օրենսդրությանը եւ մասնավորապես Լեզվի մասին օրենքի:

5. Նախեւառաջ կատարվելու է քաղաքային տնտեսության անշարժ ու շարժական սեփականության գույքագրում՝ ապահովելով այդ գործընթացի թափանցիկությունը, հաշվետվությունն ու վերահսկողությունը հասարակության կողմից: Արդյունքում բացահայտված ապօրինություններն ու չարաշահումները, անօրինական սեփականաշնորհման և անբարեխիղճ յուրացման հետևանքները վերացվելու են եւ գույքը ազգայնացվելու է դատական կարգով՝ ելնելով հանրային շահի և սոցիալական արդարության սկզբունքից:

6. Երեւանում լայնորեն տեղադրվելու են օդի և ջրի որակը, աղմուկի ու փոշու մակարդակը, տրանսպորտային խցանումները չափող սարքեր, որոնք, միավորված լինելով ընդհանուր համակարգի մեջ, ծառայելու են բնակչության կենսական կարիքները հոգալու և արագ արձագանքելու գերխնդրին: Բացի մաքուր օդի, ջրի եւ սննդի բնական իրավունքի, քաղաքացիներն ունեն նաեւ «լռության», այսինքն խաղաղ ու անաղմուկ միջավայրի իրավունքը, առանց որի թերի է անվտանգ ու բարգավաճ կենսակերպի գաղափարը: Այդ նպատակով Երեւանում իրականացվելու է «խելացի քաղաք» համալիր ծրագիրը, արհեստական բանականության կիրառման համակարգով, որի հիմնական գործառույթները կապված կլինեն 5-րդ կետում նշված և այլ առաջացող մարտահրավերների լուծման հետ: Քաղաքային իշխանությունների ողջ գործունեությունը եւ հատկապես էլեկտրոնային սարքերի ու տեսախցիկների կիրառումը փոխվելու է «հետեւել եւ պատժել» սկզբունքից, դեպի՝ «տեսնել, որպեսզի օգնել» գաղափարի:

7. Երեւանի տրանսպորտային խնդիրն իր համապարփակ լուծումը կստանա հասարակական փոխադրամիջոցների զանգվածային էլեկտրականացման հիման վրա: Հատուկ կարեւորություն և արագ լուծում է տրվելու մետրոյի վերգետնյա ուղիների և կայարանների կառուցմանը: Հիմնական ուղղություններն են լինելու Հրազդան գետի կիրճով կառուցվելիք գծերը Դավթաշենի, Կիեւյանի և Հաղթանակի կամուրջների միջեւ,

նշված շրջաններում համապատասխան հանգույցների ստեղծմամբ և հեռանկարային զարգացում ապահովելով դեպի Գարեգին Նժդեհի հրապարակ, Զվարթնոց օդանավակայան, իսկ մյուս ուղղությամբ՝ դեպի Քանաքեռ, Զեյթուն եւ Նոր Նորքի զանգվածներ տանող վերգետնյա մետրոյի միջոցով: Այդ նախագծի արժեքը տասնյակ անգամ ավելի էժան է և մի քանի անգամ արագ կարող է կատարվել, քան՝ ավանդական ստորգետնյա մետրոն:
Նախագծի ֆինանսավորումը նախատեսված է իրականացնել արտաբյուջետային միջոցներով՝ ստեղծելով բաց բաժնետիրական ընկերություն, որն ընդգրկելու է քաղաքացիների ավանդների ներդրում եկամտաբեր պետական պարտատոմսերի տեսքով:

8. Մայրաքաղաքում ողջ երթեւեկությունը կառավարվելու է մեկ համալիր համակարգով, արհեստական բանականության կիրառմամբ՝ ապահովելով առավելագույն արդյունավետությունը, թափանցիկությունն ու հարմարավետությունը: Բոլոր կանգառներում տեղադրվելու է փոխադրամիջոցների ժամանման տեղեկատու հաշվիչներ: Մայրաքաղաքի հնարավորին չափ շատ հանրային վայրերում բացվելու են ավտոմեքենաների երթեւեկությունից բացարձակապես ազատ հետիոտային գոտիներ եւ հեծանվային արահետներ:

9. Հասարակական բոլոր փոխադրամիջոցների, ստորգետնյա անցումների, բնակելի շենքերի, պետական հաստատությունների, բանկերի, առեւտրի եւ սննդի, զվարճանքի եւ հանրային օգտագործման բոլոր վայրերի ու շինությունների մուտքերն ու ելքերը պարտադիր պետք է կահավորված լինեն թեքահարթակներով կամ հաշմանդամների անվասայլակների եւ մանկական սայլակների ելումուտի համար նախատեսված սարքերով: Դրանց բացակայության դեպքում հաստատությունների ու շինությունների շահագործումն ու գործունեությունը չի թույլատրվելու քաղաքապետարանի կողմից:

10. Աղբահավաքի գործընթացը բարեփոխվելու է եվրոպական չափանիշներով, որոնց հիման վրա կառուցվելու է աղբամշակման գործարան, որը միացվելու է քաղաքի էներգետիկ համակարգին: «Մաքուր տուն, մաքուր քաղաք, մաքուր Հայրենիք» գաղափարը պետք է ներառվի ընտանեկան, դպրոցական, համազգային եւ քաղաքացիական դաստիարակության մեջ: Մաքրությունն ու անվտանգությունը դառնալու են հայոց մայրաքաղաքի հիմնական բնորոշիչ որակներ: Ողջ փողոցային լուսավորությունը փուլ առ փուլ անցնելու է արեւային մարտկոցների, որոնց արտադրությունը կազմակերպվելու է մեր երկրում՝ գերարդիական եղանակով:

11. Խոշոր շինարարությունը մայրաքաղաքի կենտրոնում արգելվելու է, փոխարենը հարկային արտոնություն է տրվելու Երեւանի հարավում (ներկայում լքված) գործարանային թաղամասի կառուցապատմանը «բիզնես-սիթի» եղանակով, դրա վերականգնումը և վերադարձը քաղաքային շրջանառության մեջ՝ օգտագործելով տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունը:

12. Քաղաքային իշխանությունը աջակցելու է Երեւանի, որպես արվեստի քաղաքի համբավի վերականգնման, տարբեր վայրերում խրախուսելով դասական երաժշտության փոքր համույթների փորձերն ու կատարումը՝ արտոնելով եւ մասամբ ֆինանսավորելով կոնսերվատորիայի եւ երաժշտական ուսումնարանների սաների և անհատ կատարողների, նկարիչների եւ թատերական խմբերի ներկայացումներն ու ցուցահանդեսները:

Եվրոպական քաղաքի գաղափարը պետք է իրականացվի երեք հիմնական քաղաքակրթական հիմքերի վրա՝ դպրոց, բուժհիմնարկ, թատրոն: Այս երեքին ենք մենք տրամադրելու մշտական եւ հատուկ ուշադրություն մեր Երեւանում:

13. Երեւանի կանաչապատումը լինելու է քաղաքային իշխանությունների գերակա նպատակը: Նախապատվությունը տրվելու է ծառերի տեղական տեսակներին, ստվեր ու թթվածին ապահովող բույսերին, իսկ ծաղիկներից գլխավոր ու գրեթե մենաշնորհային տեղը տրվելու է վարդերին: «Վարդագույն քարի քաղաք» բնորոշմանը, Երեւանը պետք է ավելացնի «կանաչ մայրաքաղաք» եւ «վարդերի թաղաք» տիտղոսը:

Տիգրան Խզմալյան
Հայաստանի Եվրոպական կուսակցության նախագահ
Երեւան
2023 թ. օգոստոս